

ները, այնպէս ալ նենգ կայսրը եւ իր արբանեակներու խարդաւանքները չեն կրնար մոռցնել տալ Քրիստոսի նահատակներու յիշատակը:

Սիրելի՛ հաւատացեալներ, այսօր, երբ կը յիշենք այս սուբերը, խնդրենք Աստուծոյ, որ անոնց հաւատքէն կայծ մը վառէ նաեւ մեր սրտերուն մէջ:

Թող անոնց քաջութիւնը մեզի զօրացնէ դժուարութեան մէջ: Թող անոնց հաւատքը մեզի օգնէ կանգնելու ճշմարտութեան առջեւ: Թող անոնց միութիւնը մեզի յիշեցնէ, թէ Եկեղեցին եղբայրական ընտանիք մըն է: Եւ երբ վախը մօտենայ մեր կեանքին, յիշենք անոնց օրինակը եւ ըսենք մենք զմեզ. «Եթէ մենք կը հաւատանք Ամենակարող Աստուծոյ, ապա այս աշխարհին մէջ չկայ ոչինչ, որմէ պէտք է վախնանք»: Որովհետեւ Աստուած է մեր ապաւէնը, մեր զօրութիւնը եւ մեր փրկութիւնը, Որուն փառք յաւիտեան. Ամէն:

## ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ

Մարդկային ճիգերով տիեզերական թռիչք իրականացնելը ցնցող յաջողութիւն մըն է: Սակայն Տիեզերքը մարդուն առջեւ իր դռներուն շատ չնչին, նեղլիկ մէկ մասը միայն կը բանայ: Տիեզերքի մեծ գաղտնիքներուն դիտահայումը, նոյնիսկ այդ նեղլիկ ճեղքին միջով, անկասկած կը հաստատէ Արարչին նկատմամբ մեր հաւատքը: Որպէս գիտնական՝ ինծի համար դժուար է հասկնալ ոչ միայն Բարձրագոյն Բանականութիւնը մերժողը, այլեւ գիտութեան զարգացումը մերժող հաւատացեալը:

### ՎԵՐՆԵՐ ՖՈՆ ԲՐԱՌԻՆ

Տարածուած է այն կարծիքը, թէ իբր տիեզերական թռիչքներու այս դարաշրջանին մէջ մենք այնքան շատ բան գիտենք բնութեան մասին, որ այլեւս անհրաժեշտ չէ Աստուծոյ հաւատալ: Այս կարծիքը կատարապէս սխալ է: Միայն նորոգ դարձն առ Աստուած կրնայ փրկել մեզ վերահաս աղէտէն:

### ՎԵՐՆԵՐ ՖՈՆ ԲՐԱՌԻՆ

Քրիստոս պատուիրաններով եւ սեփական օրինակով ցոյց տուաւ, թէ Աստուած մեր Հայրն է, իսկ մենք՝ Անոր զաւակները: Ան մատնանշեց այնպիսի հասարակութիւն մը, ուր կը թագաւորէ Սէրը: Ուստի, կեանքի կառավարման մեր փնտռութիւններուն մէջ, պէտք է մտածենք, թէ ինչպիսի մարդիկ կ'ուզէինք տեսնել մեր զաւակները եւ ինչ վարք կը սպասենք անոնցմէ: Մենք կը սիրենք զանոնք տեսնել ջանադիր, անկեղծ, ուրախ եւ բարեացակամ: Մեզի հաճելի է, երբ անոնք կ'ուրախանան: Երբեմն ալ դառնութիւն ու ցաւ կ'ապրինք, բայց հոգ չէ. եկէ՛ք երջանիկ ըլլանք այնքան, որքան կարելի է: Եւ քանի դեռ բարեկեցութեան եւ յաջողութեան մէջ ենք, եկէ՛ք օգնութեան ձեռք երկարենք անոնց, որոնք զրկուած են ատկէ: Որքան աւելի մեծ է երջանկութեան ձգտումը, այնքան աւելի կը կարողանանք զայն փոխանցել ուրիշներուն: Չէ՞ որ մենք կը հաւատանք, թէ այս կեանքը սոսկ նախապատրաստութիւն մըն է դէպի յաւիտենութիւն եւ ոչ թէ վերջնական փորձութիւն մը:

### ՈՒԻԼԻԸՄ ՀԵՆՐԻ ՊՐԵԳԳ